«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ԵՐԵՎԱՆ • ԾԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

40 տարի

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

ՁԵՌՆԱՐԿ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԲ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ (IB PYP)

2025-2026

ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

Շիրակացու ճեմարանի առաքելությունը

Ճեմարանի առաքելությունն է կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի:

Շիրակացու ճեմարանի տեսլականը

Կրթության միջազգային տիրույթում լինել առաջատար հաստատություն, որը ոգեշնչում և զորացնում է համայնքը՝ հասնելու ակադեմիական գերազանցության, գրանցելու անձնական աճ և ակտիվ ներգրավվածություն համաշխարհային հասարակության կյանքում:

Միջազգային բակալավրիատի առաքելությունը

Միջազգային բակալավրիատի առաքելությունն է՝ ձևավորել և զարգացնել հետաքրքրասեր, բանիմաց և հոգատար երիտասարդներ, ովքեր կստեղծեն ավելի լավ ու խաղաղ աշխարհ՝ միջմշակութային փոխըմբռնման և հարգանքի շնորհիվ:

Այդ նպատակով ՄԲ-ն աշխատում է տարբեր դպրոցների, կառավարությունների և միջազգային կազմակերպություններ հետ՝ զարգացնելու միջազգային կրթության և ճշգրիտ գնահատման մարտահրավերային ծրագրեր:

Աշխարհի բոլոր սաներին ՄԲ-ն խրախուսում է դառնալ գործունյա, կարեկցող և ցկյանս սովորողներ, որոնք հասկանում և ընդունում են, որ մարդիկ, իրենց տարբերություններով հանդերձ, նույնպես կարող են իրավացի լինել:

Աղբյուր՝ www.ibo.org

ՄԲ ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԲ ծրագրերի նպատակն է դաստիարակել ինտելեկտուալ մտածողությամբ մարդկանց, որոնք կաշխատեն ստեղծել ավելի լավ և խաղաղ աշխարհ: Միջին դպրոցի ծրագրի (ՄԴԾ) շրջանակում այն դրսևորվում է ՄԲ սովորողի նկարագրի, նրա մարդկային որակների ձևավորման և զարգացման միջոցով: Շիրակացու ճեմարանի միջին դպրոցի ծրագիրը սաներին ինքնակրթվելու, անձնային զարգացման աճի հնարավորություն է տալիս. ձևավորված կրթական միջավայրը նպաստում է սովորողների նկարագրի հետևյալ որակների զարգացմանը.

Հետազոտող. Մենք բավարարում ենք մեր հետաքրքրասիրությունը՝ զարգացնելով հետազոտական հմտություններ: Մենք կարողանում ենք սովորել և՛ ինքնուրույն, և՛ այլոց հետ: Մենք սովորում ենք ոգևորված և պահպանում ենք ուսանելու նկատմամբ սերը ողջ կյանքի ընթացքում:

Բանիմաց. Մենք զարգացնում և կիրառում ենք համատեքստային հասկացությունները՝ ուսումնասիրելով գիտելիքը առարկայական միջակայքերում: Մեզ հետաքրքրում են համաշխարհային նշանակություն ունեցող խնդիրները և գաղափարները:

Մտածող. Մենք կիրառում ենք քննադատական և ստեղծագործական մտածողության հմտությունները՝ վերլուծելու և բարդ իրավիճակներում պատասխանատու քայլեր ձեռնարկելու համար: Մենք նախանձախնդիր ենք պատճառաբանված, բարոյական որոշումներ կայացնելու հարցում:

Հաղորդակցվող. Մենք վստահորեն և ստեղծարարությամբ կարողանում ենք արտահայտվել մի քանի լեզուներով, տարբեր ոճերով ու եղանակներով: Մենք արդյունավետորեն ենք համագործակցում՝ ուշադրությամբ լսելով այլ անհատների և խմբերի տեսակետները:

Սկզբունքային. Մենք գործում ենք ազնվությամբ, արդարության խոր զգացումով և բոլոր մարդկանց արժանապատվության ու իրավունքների հանդեպ հարգանքով: Մենք պատասխանատու ենք մեր արարքների և դրանց հետևանքների համար:

Լայնախոհ. Մենք սերում ենք մեր սեփական մշակույթից և պատմությունից, բայց գնահատում և հարգում ենք նաև ուրիշների ստեղծած արժեքներն ու ավանդույթները: Մենք ընդունում ենք բազմակարծությունը, և մեր աճը պայմանավորված է փորձառությամբ:

Հոգատար. Մենք դրսևորում ենք կարեկցանք, սրտացավություն և հարգանք այլ մարդկանց հանդեպ: Մենք ծառայելու ոգի ունենք և աշխատում ենք հօգուտ դրական փոփոխությունների մարդկանց կյանքում և մեզ շրջապատող աշխարհում:

Համարձակ. Մենք անորոշ իրավիճակներում դրսևորում ենք վճռականություն. գործում ենք ինչպես առանձին, այնպես էլ համագործակցությամբ՝ ուսումնասիրելու արդիական գաղափարներն ու նորարարական ռազմավարությունները: Մենք դիմացկուն ենք դժվարությունների հանդիպելիս և հնարամիտ ենք արագորեն փոփոխություններ կատարելու հարցում:

Հավասարակշռված. Մենք հասկանում ենք մտավոր, ֆիզիկական և հուզական ոլորտների միջև հավասարակշռության կարևորությունը մեր և այլոց բարօրության համար: Մենք ըմբռնում ենք մեր փոխկապվածությունն այլ մարդկանց հետ և այն աշխարհին, որում ապրում ենք:

Վերլուծող. Մենք խորապես հետաքրքրված ենք ինչպես համընդհանուր, այնպես էլ մեր սեփական գաղափարներով ու փորձառությամբ: Մենք աշխատում ենք վեր հանել, վերլուծել մեր ուժեղ և թույլ կողմերը՝ մեր ուսումնառությանն ու անհատական զարգացմանը նպաստելու համար:

Աղբյուր՝ IB Learner Profile, IBO

ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը ստեղծվել է 1990 թ.-ին՝ հնարավորություն տալով Հայաստանի, Սփյուռքի և արտասահմանի օժտված ու տաղանդավոր երեխաներին ստանալու լիարժեք և որակյալ կրթություն: Ճեմարանն իր հիմնադրման օրից իրականացնում է հեղինակային ծրագիր, որը մշակել է հեղինակային իրավունքի իրավատեր, կրթահամալիրի հիմնադիր տնօրեն Աշոտ Ալիխանյանը:

Ճեմարանի առաքելությունն է կերտել ազգային հենքի վրա ձեւավորված եւ համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական եւ քաղաքացի:

Ճեմարանը 2010 թվականին տարածաշրջանում առաջինը դարձավ «Ռաունդ Սքվեր» միջազգային դպրոցների համաշխարհային ասոցիացիայի լիիրավ անդամ: «Ռաունդ Սքվեր»-ը վեց մայրցամաքների 50 երկրներում 260 նորարական դպրոցների համաշխարհային ցանց է:

Այսօր «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը միակն է Հայաստանում, որի բոլոր երեք՝ կրտսեր, միջին եւ ավագ դպրոցները հավաստագրված են համապատասխանաբար Միջազգային բակալավրիատի՝ Primary Years Programme, Middle Years Programme եւ Diploma Programme ծրագրերով:

Միջազգային բակալավրիատը ոչ կառավարական, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն ունի խորհրդատվական կարգավիճակ Եվրոպայի խորհրդում եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Այն միջազգային ճանաչում ունեցող հանրակրթական ամենահայտնի համակարգն է, որի ավարտական վկայականը հնարավորություն է տալիս առանց լրացուցիչ քննությունների ընդունվել աշխարհի մի շարք առաջատար համալսարաններ: 1968թ.-ին հիմնադրված համակարգն այսօր ներառում է 160 երկրների 5900 դպրոց:

Ճեմարանի՝ 1000 եւ ավելի շրջանավարտները սովորել եւ սովորում են Հայաստանի եւ աշխարհի առաջնակարգ բուհերում, նրանցից շատերը բարձրագույն դիրք եւ պաշտոններ են զբաղեցնում գիտության տարբեր բնագավառներում:



ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

40 տարի

1985 -ին Աշոտ Ալիխանյանը ստանձնում է Երևանի № 94 միջնակարգ պրոֆտեխուսումնարանի տնօրենի պաշտոնը

1990 -ին հիմնադրվում է Շիրակացու ճեմարանը

1993 -ին ավարտում են Ճեմարանի առաջին շրջանավարտները

1996 -ին մշակվում է Ճեմարանի օրհներգը

1998 -ից հիմնադրվում են Ճեմարանի Կրտսեր և Միջին դպրոցները

2009 -ին Ճեմարանն առաջին անգամ մասնակցում է Ռաունդ Սքվերի (RS) համաժողովին, իսկ 2010-ին անդամագրվում է ՌՍ-ին

2022 -ին հիմնադրվում է «Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրը

2022 -ին Ճեմարանը դառնում է Միջազգային դպրոցների խորհրդի (CIS) անդամ

2014 -ին Ճեմարանը դառնում է Միջազգային բակալավրիատի (IB) 3 ծրագրերը իրականացնող միակ կրթահամալիրը ՀՀ-ում

2013 -ին Կրտսեր դպրոցը առաջինը Հայաստանում հավաստագրվում է իրականացնելու IB PYP ծրագիրը

1. Ի՞նչ է Միգազգային Բակալավրիատի Կազմակերպությունը (International Baccalaureate Organization):

- ՄԲԿ-ն շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կրթական կազմակերպություն է: Հիմնադրվել է 1968 թվականին, Ժնևում (Շվեյցարիա):

- Կառավարվում է խորհրդի 16 անդամների կողմից և ֆինանսավորվում է ՄԲ դպրոցներից,
  վերապատրաստումներից, հրատարակություններից ստացած վճարներով:

- ՄԲԿ-ն առաջարկում է միջազգային կրթության եռաստիճան ծրագրեր.
  - Դիպլոմային ծրագիր (ԴԾ՝17 - 18 տարեկան սովորողների համար),
  - Միջին դպրոցի ծրագիր (ՄԴԾ՝11 - 16 տարեկան սովորողների համար),
  - Կրտսեր դպրոցի ծրագիր (ԿԴԾ՝ 3 - 10 տարեկան սովորողների համար):

- Այս պահին աշխարհի 159 երկրների 5500-ից ավել հավաստագրված ՄԲ դպրոցներում ուսանում են 1105000-ից ավելի սովորողներ:

2. Ե՞րբ և ինչու՞ է ստեղծվել ՄԲԿ-ն:

1948 թվականին Մարի Սերես Մաուրետը առաջարկեց մի համակարգ, որը կոչված էր դառնալու ՄԲԿ-ի Դիպլոմային ծրագիր, երբ նա ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվերով գրեց «Արդյոք կա որևէ ճանապարհ խաղաղության ուսուցման համար» ձեռնարկը:

1960-ական թվականների կեսերին Ժնևի Միջազգային դպրոցի մի խումբ ուսուցիչներ ստեղծեցին Միջազգային դպրոցների դիտարկման սինդիկատը (տեղեկատվական կենտրոն), որը հետագայում կոչված էր դառնալու Միջազգային Բակալավրիատի Կազմակերպություն (ՄԲԿ):

(Source:https://www.k12academics.com school-types/ib-school-international-baccalaureate/history)

ՄԲ առաքելությունն է՝

ձևավորել և զարգացնել հետաքրքրասեր, բանիմաց և հոգատար երիտասարդներ, ստեղծել ավելի լավ ու ավելի խաղաղ աշխարհ՝ միջմշակութային փոխըմբռնման և հարգանքի միջոցով:

Այսօր ՄԲ-ն համագործակցում է կառավարությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ միջազգային կրթությունը խթանող ծրագրերի կատարելագործման և դրանց անաչառ գնահատման նպատակով: ՄԲ-ն ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրախորհրդի խորհրդատվական կազմակերպություն է:

© International Baccalaureate Organization 2024

3. Ի՞նչ է ՄԲ Կրտսեր Դպրոցի Ծրագիրը (ԿԴԾ):

Անկախ գտնվելու վայրից կամ կազմակերպման ձևից՝ ՄԲ Կրտսեր Դպրոցի Ծրագրի (ԿԴԾ) նպատակը միջազգային մտածելակերպի տեր մարդ դաստիարակելն է:

Միջազգային մտածելակերպի ձևավորումը ԿԴԾ-ի շրջանակներում տեղի է ունենում «Սովորողի նկարագրի» ձևավորման միջոցով:

4. Ի՞նչ է «Սովորողի նկարագիրը» (IB Learner Profile):

«Սովորողի նկարագրի» մեջ ներառված են կարևոր նշանակություն ունեցող հատկանիշներ (որակներ), որոնք անհրաժեշտ են ամբողջ աշխարհում համարձակ, ակտիվ և գործունյա քաղաքացիներ կերտելու համար:

Այդ հատկանիշներն են՝

- **Հետազոտող.** Ես հետաքրքրասեր եմ և գիտեմ, թե ինչպես կարելի է գտնել ինձ հետաքրքրող շատ հարցերի պատասխանները: Ես սիրում եմ սովորել:
- **Մտածող.** Ես օգտագործում եմ մտածելու իմ հմտությունները, որպեսզի լավ ընտրություն կատարեմ և խնդիրներ լուծեմ:
- **Հաղորդակցվող.** Ես հաղորդակցվում եմ մեկից ավելի լեզուներով:
- **Համարձակ.** Փորձում եմ նոր բաներ, սիրում եմ ուսումնասիրել ու վստահաբար ներկայացնում եմ իմ փորձը:
- **Բանիմաց.** Ես ուսումնասիրում եմ մեծ գաղափարներ, որոնք կարևոր են: Ես գիտեմ և կարող եմ անել շատ կարևոր բաներ:
- **Սկզբունքային.** Ես արդար եմ և ազնիվ, կարող եմ ճիշտ որոշումներ կայացնել այն հարցի շուրջ, թե ինձ համար ինչն է ճիշտ կամ սխալ:
- **Հոգատար.** Ես մտահոգված եմ այլ մարդկանց կարիքներով և զգացմունքներով: Կարծում եմ, որ ուրիշներին օգնելը կարևոր է:
- **Լայնախոհ.** Ես հեշտությամբ եմ հարմարվում նոր պայմաններին: Ես ողջունում և հարգում եմ այլ մարդկանց տեսակետները և գործունեության ձևերը:
- **Հավասարակշռված / ներդաշնակ զարգացած.** Որպեսզի առողջ լինեմ, պետք է ապահովեմ մարմնիս և մտքերիս կարիքների հավասարակշռությունը:
- **Վերլուծող.** Ես մտածում և վերլուծում եմ իմ գործողությունները և ստացված արդյունքները:

5. Ի՞նչ և ինչպե՞ս է իմ երեխան սովորելու կրտսեր դպրոցում:

Կրտսեր դպրոցում, ղեկավարվելով ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի, Ճեմարանի հեղինակային ծրագրի և ՄԲ ԿԴԾ-ի պահանջներով, մենք հանձն ենք առել ստեղծել հետազոտությունների վրա հիմնված ուսուցում:

Վեց վերառարկայական թեմաներն ապահովում են հետազոտությունների իրականացման և գիտելիքների կառուցման լայն շրջանակ: Ուսուցիչները և սովորողները ղեկավարվում են այդ վերառարկայական թեմաներով՝ ընտրելով ուսումնասիրու¬թյունների համար նախատեսված ուղղությունները: Այս գործընթացի միջոցով սովորողները զարգացնում են շատ կարողություններ և կարևոր հասկացությունների վերաբերյալ իրենց ըմբռնումը, ձեռք են բերում անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ, սովորում են իրականացնել սոցիալական պատասխանատվություն պահանջող գործունեություն:

6 Ի՞նչ է «Վերառարկայական թեման»:

«Վերառարկայական» բառը ՄԲ-ն կիրառում է նկարագրելու այն ուսումնական կապերը, որոնք առկա են գիտության բոլոր ոլորտներում: Դրանք փոխկապակցված են և կարող են կիրառվել ինչպես ուսումնական առարկաների շրջանակներում, այնպես էլ իրական կյանքում:

Վերառարկայական թեմաներն են՝

- Ով ենք մենք
- Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ
- Ինչպես ենք մենք ինքնարտահայտվում
- Ինչպես է աշխատում աշխարհը
- Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում
- Մոլորակը մեր ընդհանուր տունն է

ՄԲ ԿԴ ծրագրի մեջ ներառված հիմնական տարրերն են.

1. Հասկացություններ (Concepts): Դրանք 7 հիմնական հասկացություններ են, որոնք իրենց մեջ բովանդակում են առանցքային հարցեր, որոնք էլ պետք է ուղղորդեն հետազոտության գործընթացը:

Այդ համընդհանուր հասկացությունները հնարավորություն են տալիս ընտրել ուղիներ, որոնցով կարելի է որոշել հետազոտության թեմաները: Դրանք հնարավորություն են տալիս ստեղծել վերառարկայական կապեր: 7 հիմնական հասկացություններն են՝

- **Ձև՝** Ի՞նչի է նման:
- **Գործառույթ՝** Ինչպե՞ս է աշխատում:
- **Պատճառ՝** Ինչո՞ւ: Ինչո՞ւ է այսպիսին:
- **Փոփոխություն՝** Ինչպե՞ս է փոխվում:
- **Կապ՝** Ինչպե՞ս է կապված այլ բաների հետ:
- **Տեսակետ՝** Ի՞նչ կարծիքներ կան:
- **Պատասխանատվություն՝** Ինչպիսի՞ն է մեր պատասխանատվությունը:

2. Ուսումնառության մոտեցումներ՝ հմտություններ (Approaches to learning , ATL): 5 խումբ վերառարկայական հմտությունները ձեռք են բերվում հետազոտության վրա հիմնված ուսուցման ընթացքում:

Այդ հմտություններն են՝

- **Մտածելու**
- **Սոցիալական**
- **Հաղորդակցման**
- **Հետազոտական**
- **Ինքնակառավարման**

3. Գործունակություն՝ Agency, այն բովանդակալից և գիտակցված գործողություններ կատարելու ուժ է և հնարավորություն է տալիս ունենալ ձայնի, ընտրության իրավունք, տեր լինել սեփական արարքներին և ստեղծած աշխատանքներին:

4. Գործողություն՝ Action:
Կրտսեր դպրոցում խրախուսվում է սաների՝ վերլուծելու, տեղեկացված ընտրություն կատարելու և ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողությունները, որոնք օգտակար կլինեն թե՛ իրենց հասակակիցների, թե՛ դպրոցի անձնակազմի և թե՛ ողջ հասարակության համար:

5. Գիտելիք:
ԿԴԾ-ն ընդունում է, որ բավականին դժվար է որոշել այն, ինչ պետք է սովորի յուրաքանչյուր աշակերտը միջազգային որևէ միջավայրում և համայնքում: Նախատեսելով հաստատուն ուսումնական պլան՝ ԿԴԾ-ն առաջ է քաշում թեմաներ կամ գիտելիքի բնագավառներ, որոնք անհրաժեշտ են վերառարկայական 6 թեմաների ուսումնասիրության համար: Ուսուցման այդ գործընթացը սկսվում է վաղ մանկությունից: Վերառարկայական թեմաները (ի հակադրություն դասագրքերի վրա հիմնված ուսուցման) իրենց մեջ ընդգրկում են ուսումնասիրման համար բավականին ընդարձակ ռեսուրսների շրջանակ:

6. Ի՞նչ է «Հետազոտության թեման»:
ԿԴԾ-ով նախատեսված բոլոր 6 թեմաները լուսաբանվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ողջ ընթացքում՝ բոլոր առարկաների շրջանակներում (մաթեմատիկա, մայրենի և օտար լեզուներ, Ես և շրջակա աշխարհը, կերպարվեստ, երաժշտություն, պար, ֆիզկուլտուրա, շախմատ, տեխնոլոգիա...)՝ սերտ կապ ապահովելով իրական կյանքի և մեզ շրջապատող աշխարհի հետ: Հետազոտության ամեն թեմայի սովորաբար տրամադրվում է 4-6 շաբաթ՝ ուսումնասիրելով բոլոր հասանելի տեղեկատվական աղբյուրները: Օրինակ, «Մոլորակը մեր ընդհանուր տունն է» վերառարկայական թեմայի շրջանակներում սովորողները պարզում են, թե ինչպես են աշխարհի տարբեր երկրներ օգտագործում, տնօրինում մոլորակի ռեսուրսները: Իրենց իսկ կողմից իրականացված հետազոտության շնորհիվ նրանք պատասխանում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ «Ինչպե՞ս են այդ ռեսուրսները միավորում ամբողջ աշխարհի մարդկանց» կամ «Ինչպե՞ս են այդ ռեսուրսները փոփոխվում և ի՞նչ նշանակություն ունեն մարդկանց համար»:

7. Ի՞նչ խմբակներ կան կրտսեր դպրոցում:
Յուրաքանչյուր երեխա իր և ծնողի ցանկությամբ կարող է մասնակցել մեկ արտաուսումնական ակումբի՝ խմբակի: Կրտսեր դպրոցում գործում են հետևյալ ակումբները: Դրանք ներառված են պայմանագրում:

- **Կերպարվեստի**
- **Հմուտ ձեռքեր**
- **Պար**
- **Հիփ-հոփ**
- **Երգչախումբ**
- **Շախմատ**
- **Կարատե**

Բացի վերոնշյալ ակումբներից կրտսեր դպրոցում գործում են վճարովի խմբակներ, որոնց մասնակցության համար անհրաժեշտ է լրացուցիչ դիմել: Դրանք են՝ Երգի թատրոնը, դաշնամուրի և գերմաներենի ակումբները:

8. Ի՞նչ պետք է իմանան ծնողները ճեմարանի երթուղիներից օգտվելու մասին:
Խմբի ավագ մանկավարժը նախօրոք տրամադրելու է երթուղու համարը, վարորդի և ուղեկցողի տվյալները: Առավոտյան ճանապարհելիս և հետադարձին լինել երեխայի համար նախատեսված կանգառում նշված ժամից 2 րոպե շուտ: Այն ծնողները, ովքեր իրենց անձնական տրանսպորտային միջոցներով են բերում երեխաներին դպրոց, պետք է 8:45 ապահովեն երեխայի ներկայությունը դպրոցում, իսկ հետադարձին մոտենալ դպրոց 15:40 կամ 17:20(երկարօրյայի դեպքում):

Խնդրում ենք սեփական մեքենան կայանել դպրոցի մուտքից հեռու, և ոտքով անձամբ մոտենալ դպրոցի մուտքին երեխային ճանապարհելիս և դիմավորելիս:

9. Ինչպե՞ս է կազմակերպվում սնունդը կրտսեր դպրոցում:
Երեխաները մինչև ուսումնական օրվա ավարտ 3 անգամ սնվում են դպրոցում՝ նախաճաշ, ճաշ և հետճաշիկ: Երկարօրյա աշխատակարգով մնացող երեխաները ևս մեկ անգամ ունեն սնվելու հնարավորություն: Ճաշացանկը ուղարկվում է ծնողներին: Երեխայի հետ որևէ սնունդ ուղարկելու կարիք չկա, մեծ ցանկության դեպքում կարող եք դնել փոքր քանակով թարմ կտրտած միրգ: Կոնֆետներ և այլ քաղցրեղեն արգելված է երեխայի հետ ուղարկել դպրոց: Անհրաժեշտ է նաև դպրոցին տեղյակ պահել երեխայի սննդային ալերգիաների մասին:

7. Իսկ ինչպիսի՞նն է մոտեցումը տնային հանձնարարությունների նկատմամբ:

Կրտսեր դպրոցում «տնային հանձնարարություններ» եզրույթի փոխարեն կիրառվում է **ինքնուրույն յուրացման առաջադրանքներ** եզրույթը, որը ցույց է տալիս, որ երեխան դրանք պետք է կատարի ինքնուրույն, և դրանց նպատակը երեխայի յուրացման աստիճանը ստուգելն է ուսուցչի կողմից: Ուստի, խնդրում ենք առաջին իսկ յուրացման առաջադրանք ստանալու դեպքում միասին պայմանավորվել երեխայի հետ՝ ինչպե՞ս է կատարելու այն, ձեր՝ որպես ծնողի անելիքները որն են, իսկ իրենը՝ որը: Յուրացման առաջադրանքների հանձնարարումը սկսվում է 1-ին դասարանի երկրորդ կիսամյակից: Նախքան դա՝ կրտսեր դպրոցի հոգեբանական ծառայությունը կազմակերպում է հատուկ սեմինար-քննարկում ինքնուրույնության զարգացման և յուրացման առաջադրանքների նկատմամբ վերաբերմունքի մասին: Անպայման մասնակցեք դրան:

8. Ինչպե՞ս կարող են ծնողներն աջակցել սովորողների ուսումնական գործընթացին:

- Ամենօրյա վերահսկողություն իրականացրեք երեխայի նկատմամբ, որպեսզի իմանաք, թե ինչ աշխատանքներ են իրականացվել դպրոցում:
- Ուշադիր եղեք ձեզ ուղարկվող էլեկտրոնային նամակներին, բացի հրատապ հայտարարություններից դուք ստանալու եք տեղեկատվություն երեխայի հաջողությունների և դժվարությունների մասին:
- Ապահովեք երեխային ուսումնառության համար անհրաժեշտ պարագաներով:

- Ցուցաբերեք հետաքրքրվածություն Ձեր երեխաների ձեռքբերումների նկատմամբ:
- Օգնեք երեխային կազմակերպել իր օրը, որ նա գերծանրաբեռնվածություն չզգա:
- Ընդունեք այն, որ դուք կարող եք օգնել Ձեր երեխային մեծ նախագծեր պատրաստելիս, բայց չանեք այդ աշխատանքը նրա փոխարեն:

Օրինակ՝ կարող եք երեխայի համար գտնել և տրամադրել նրան թեմայի վերաբերյալ տեղեկատվություն, փոքրիկ էքսկուրսիա կազմակերպել այդ թեմայով նախագծեր պատրաստելու համար կամ օգնել նրան այդ ամենը ներկայացնել ցուցադրման միջոցով: Դա, համոզված ենք, անսահման հաճույք և հպարտություն կպատճառի Ձեզ, քանի որ աշխատելով միասին՝ մենք կնպաստենք երեխայի զարգացմանը:

- Որպես կամավոր մասնակցեք ձեր երեխայի խմբում, դպրոցի գրադարանում, ճաշարանում կամ դպրոցում ընդհանուր կազմակերպվող աշխատանքներին և միջոցառումներին:
- Մշտական և բովանդակալից կապ հաստատեք Ձեր և դպրոցի միջև:

Այսպիսով, ո՞րն է այն գրավականը, որ կրտսեր դպրոցում ուսուցումը դարձնում է արդյունավետ:

Կրտսեր դպրոցը սովորողների մի համայնք է և լինելով ՄԲ գաղափարախոսությանը համահունչ և հաշվի առնելով երեխաների բնական հետաքրքրասիրությունը՝ ուսուցման կենտրոնում տեսնում է հենց երեխաներին:

ՄԲ ԿԴԾ-ի մոդելը համապատասխանում է մեր առջև դրված նպատակներին, քանի որ կրտսեր դպրոցի նպատակն է՝ ունենալ միջազգային հայացքների տեր մարդ, որն ամբողջ կյանքի ընթացքում ունի շարունակական ուսումնառության կարիք:

Մեր առաքելությունն է՝ **կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական ու քաղաքացի:**

Ձեզ միշտ ուրախ ենք տեսնել Ծիրակացու ճեմարանի կրտսեր դպրոցում:
Մենք ունենք Ձեր աջակցության կարիքը:

Նոր Նորքի 5-րդ զանգված,
Մուշեղ Գալշոյան 35, Երևան 0079, ՀՀ

(+374 10) 668281

primary@shirakatsy.am

www.shirakatsy.am